

ՀՆՁՍԿ

ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՏԱԿՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Այսօր առաջին անգամը չէ, որ պետականության խնդրի մասին խօսում ենք թերթիս սին սկզբներում: «Հըն- չակի» մատակարարակ էսթ տարւայ գոյութեան ընթաց- քում այդ խնդիրը շատ անգամ շօշափվել է զանազան յօդուածներում և մեր ընթերցողները գիտեն, թէ ինչն ենք համարել պետականության պատճառը և որն է մեր հայեացքը:

Մեր մամուլի մէջ և մեր հասարակական այլ և այլ ականաւոր անձերի կողմից ամեն ժամանակ պետականու- թեան խնդիրը նկատվել է գրեթէ բացառապէս բարո- յական խնդիր: Այդ անձերից առաջ բերելով միայն եր- կուսը, ամենանշանաւորները, խորհեան չայրիկ և Գրի- գոր Արծրունի, մենք կը տեսնենք, որ դրանք նայել են պետականության խնդրի վրայ առաջնապէս իբրեւ բա- րոյական խնդրի վրայ: Երկուսն էլ իրանց ազգու ոճով դիմում էին տաճկահայ ժողովրդին, բարոյեցող նրան չը թողնել իր երկիրը, հեռավար մնալ՝ այն հողին, որ նրան սնուցել է դարերից ի վեր, հեռու կենալ այն «հրէական ակաթից», որ նրան մղում է դէպի թափառական կեանք, չը ձգել իր հօրենական արհեստն ու օջախը՝ բազմ փրնտ ունելու համար օտարութեան մէջ, անձնատուր չը լինել իր «հոգեկան» հակումներին, որ նրան դարձրել է «թա- փառական հրէայ», բայց այնպիսին, որ իր «չահի» ե- տեւից է ընկած միայն: Եւ այդ թէմայի վրայ մենք ը- սել ենք խորհեանի ամենաոգեւորված ճառերը, ամենա- զգայուն շեշտերը, ամենազերմ ու կոշական հրաւերնե- րը՝ դառնալ դէպի Հայաստանի ամայացած դաշտերը, դէպի ընտանեկան օջախը: Այդ թէմայի վրայ մենք կար- դացել ենք Արծրունու ամենալաւ տողերը, նրա սիրող սրտի ամենագրգռված, անհամբեր յարձակումներն ու մե- ղադրանքները պետականության դէմ, տեսել ենք նրա ջը- ղային ոճի ամենամեծ ոյժը՝ ի անկեղծութեան այն թու- թուումներով, որոնց գործածութեան գաղտնիքը գիտէր միայն ինքն Արծրունին:

Այդ բոլոր քարոզներն արտայայտութիւններ էին ստեպ ամենաբարձր զգացումների, մարդասիրական ու հայրենասիրական ամենազերմ բաղձանքների և միշտ, մինչեւ վերջին երեք-չորս տարիներն առհասարակ այդ ոգով ու իմաստով էր գրվում ու խօսվում մեր մէջ: Բայց, դժբաղդաբար, իրականութիւնը շարունակ ապա- ցուցանում է չը նայած այդ քարոզների բարոյա-

կան բարձր ոյժին, նրանք չեն կարող և չը կարողացան պետականութեան հոսանքի առաջն առնել:

Եւ այլ կերպ չէր կարող լինել, որովհետեւ պան- դրխտութեան հիմնական պատճառը, գլխաւոր շարժառի- թը բարոյական չէ, այլ տնտեսական: Հայ ժողովրդի հա- մար խնդիրն իր գոյութիւն ունենալու, ապրելու մէջն է, մի բան, որ պահանջում է նրա տնտեսական վիճակի բա- րելաւումը, արդիւնաբերութեան պայմանների փոփոխու- թիւնը նորանոր պահանջների համեմատ, երկրի ներկայ հարկային քայքայիչ, հարստահարող սիստէմի վերացումը և հաստատութիւնը մէկ այնպիսի նոր սիստէմի, որ համա- պատասխան լինի ժողովրդի տնտեսական ոյժերին և դը- րանց զարգացման: Իր նիւթական վիճակի անարգել քայ- քայման զօրութեամբ, իր նիւթական գոյութեան ապա- հովութեան պահանջի տակ, խոյս տա ու համար վաշխա- ռուների ու պարտատէրների հալածանքներից՝ հայ ժո- ղովրդը ստիպված է անգագար թողնել իր երկիրը, ուր նա այլ ևս չէ գտնում մի խեղճ գոյութիւն անգամ: Նրա ձեռքից շարունակ օրինական ու ապօրինի կերպով խլում են իր կտոր հողը և կամ այդ հողի արդիւնքները, կործանվում է նրա բնատուրական արհեստանոցը, եւրօպական ու Հայաստանի մի քանի վայրերում տեղական գործարանա- կան արդիւնաբերութիւնների մրցութեան չը դիմանալով: Հաղարարներն են այժմ այն պանդուխտները, որոնք կամ կորցրած են պարտքերի և այլ ձեւերի տակ իրանց հո- ղը և կամ «ձեռք են քաշել» այդ հողից, որ նրանց համար դարձել է մէկ խեղճ կան բռն, և բանտարկան աղատ աշխատանք են որոնում այլ երկրների արդիւ- նաբերող քաղաքներում: Այդ հանգամանքներում ին- քզգեցութիւն կարող է ունենալ այդ պանդուխտ ժո- ղովրդի վրայ այն բոլոր, թէկուզ բարձր ու ոգեւորված, քարոզները, որոնց նպատակն է պանդխտութեան առա- ջըն ունել և կամ արդէն պանդխտացողներին երկիր դար- ձնել: Հայ պանդուխտ այդ ամենը լսում է, լսում է նեղված սրտով, իր թուքը կուլ տալով, գաղտնի կերպով պնդելով իր արցունքը, զգացված սրտաշարժ քարոզներից: Եւ այդ քարոզների տակ բանի անգամ նա, պանդուխ- տը, մտածել է իր վերսդարձի մասին: Բայց յետոյ... գործադրել է նա արգեօք, խօսելով ոչ թէ անհասանելի, այլ ընդհանուրի մասին: Հարցը դնենք աւելի ճիշդ կեր- պով — կարող էր, կարող է արդեօք նա գործադրել այն, ինչ նրան քարոզում են — չը պանդխտել այլ ևս: Իրականութիւնը մեզ միշտ ապացուցել է և այսօր ա- լելի, քան երբ եւ է, որ հայ ժողովրդը չէ դադարում

պանդխտի, այլ և ընդհակառակը, երկրի տնտեսական պայմանները՝ գնալով՝ աւելի ընդարձակ ծաւալի են հասցրել և հասցնում պանդխտութեան հոսանքը, որ երբեմն, ինչպէս, օրինակ, վերջին տարին սովի պատճառով, դառնում է կատարեալ գաղթականութիւն հարկաւոր, հաղարաւոր ընտանիքների: Հակառակ ամեն քարոզների, հակառակ իր զգացումների ու կապակցութիւնների — երկրում իր ունեցած տնտեսական պայմանների զօրութեամբ, իր նիւթական պահանջների ստիպումով, հայ ժողովուրդը եղել ու միշտ մնացել է մէկ կամայ «թափառական հրէայ»:

Հայ ժողովուրդին քարոզել են «կապված մնալ» իր սեփական կտոր հողին, իր օջախին: Շատ լաւ բայց եթէ այդ կտոր հողն է հէնց, որ դարձել է նրա համար ամեն թշուառութեան աղբիւր — ինչ ելք գտնէ նա և ինչպէս մնայ նրան կապված: Արծաթի ու ոսկու պահանջը՝ գնալով՝ այնքան ընդարձակվել է մինչև անգամ գիւղական ազգաբնակչութեան մէջ Հայաստանում, որ դարձել է հակառակ առաջնան, մէկ ամենագլխաւոր հարկաւորութիւն: Արծաթով ու ոսկով է, որ այսօր նա պէտք է վճարէ գրեթէ իր բոլոր հարկերը. արծաթով ու ոսկով է, որ նա պէտք է ձեռք բերէ իր ապրուստի շատ պէտքերը, որոնք այժմ՝ գոհացվում են նրա երկրում մուտք գործած գործարանական արդիւնքներով, սրանք իրանց կողմից կամ առող դարձրած լինելով տեղական ձեռագործ արդիւնքները և կամ ուղղակի աւերած ու կործանած լինելով մի շարք ձեռագործ արհեստներ: Եւ այդ պայմանների շնորհով՝ ընկած լինելով պարտատէրերի ձեռքը, որոնցից արծաթ ու ոսկի է փոխ առնում գիւղացին ահա հարկին տոկոսներով վերադարձնելու պայմանով, ինչ է այլ եւս նրա համար այն «տուն ու տեղը», այն «հարսն ու ցորենը», եթէ ոչ միայն այն համեղ կտորը, որը շարունակ շահագործել և ի վերջոյ իր ձեռքը գցել՝ դառնում է պարտատէրի այլ ևս գլխաւոր հոգսը: Այդ պայմանից էլ առաջանում է մէկ ուրիշ նոր պայման. — դա՛ գիւղացու նոր պահանջն է արծաթ ու ոսկի գտնել և այլ ևս «է թէ իր երկրի վաշխառուններից ու վաճառականներից, որոնք նրա, գիւղացու, պարտքի տեղ արդէն նրա «կտոր հողը» են ուղղում վերցնել, այլ ունենալ մէկ ուրիշ, էլ ոչ իր կտոր հողի վրայ, աղատ աշխատանք, որ հասուցվում է դրամով: Չը լինելով կամ գրեթէ չը լինելով իր երկրում այդպիսի աղատ աշխատանք, որ նրան տայ արծաթ ու ոսկի, մեր գիւղացին էլ ստիպված է անցնել այնպիսի երկիրներ, ուր կարող է բաւարարութիւն գտնել իր այդ պահանջը:

Այսպիսի պայմաններում ասել թէ՛ թող գիւղացին «կապված մնայ» իր կտոր հողին: Ամենահանձարեղ քարոզները պանդխտութեան հոսանքի դէմ, մարդկային ամեն նաւթեղ ու համախմբված կամքերը բնաւ անկարող են մղել նիւթական պահանջների կոյր ըմբից առաջացած այդ բնական երեւոյթի դէմ: Մէկ ուրիշ, ոչ թէ բարոյական,

այլ նիւթական տեսակետից նայելով ու քննելով պանդխտութեան խնդիրը և բոլորովին ուրիշ միջոցով, ոչ թէ քարոզներով, այլ նիւթական պայմանների արմատական վերանորոգութեամբ է, որ պէտք է և կարելի է ընդհանուր կերպով վերջ տալ պանդխտութեան հոսանքին: Այդ միջոցի մասին այս եօթ տարւայ ընթացքում, խօսելով այդ խնդրի վրայ, քանիցս տեսել ենք, որի մասին ասացինք նաև ներկայ յօդուածի սկզբում: Հայ ժողովուրդի տնտեսական ոյժերի աղատ անարգել զարգացում, այդ զարգացման համար տնտեսական, հարկային ու ֆինանսական նպաստաւոր պայմանների հաստատութիւն, այնպիսի պայմաններ, որոնք համապատասխան լինեն աշխատաւոր ընդհանրութեան նիւթական շահերին ու պահանջներին — ահա՛ այն միջոցը, որ կը փրկէ հայ ժողովուրդին նիւթական սպառումից, տնտեսական սնանկ վիճակից, որով և, հետեւաբար, պանդխտութեան հոսանքից, որ առաջացել է նրա նիւթական նոյն ընկած վիճակից ու կրած հարուածներից: Ասել թէ պէտք է գործադրել այդ միակ միջոցը հայ ժողովուրդի փրկութեան, նշանակում է ասել յեղաշրջել, յեղափոխել այն տնտեսական կարգերը, այն քաղաքական ու իրաւական բեւեմը, որ ներկայումս գոյութիւն ունեն Հայաստանում: Ուրեմն, դարձեալ յեղափոխութեամբ է, որ պէտք է և կարող է լուծուի ստանալ պանդխտութեան խնդիրը, ինչպէս և ամեն խնդիրներ՝ մեր տնտեսական, հասարակական ու քաղաքական կեանքում առաջացած: Այդ միակ միջոցի վրայ են մեզ մատնանիշ անում գիտական միտքը և հայկական իրականութիւնը: Չգտել դու գործադրութեանն՝ այսօր սուրբ պարտականութիւնն է ամբողջ հայ աշխատաւոր ընդհանրութեան և կրթված դասակարգին պատկանող այն հայերի, որոնք հասկացել են հանրամարդկային առաջադիմութեան նոր պահանջները և որոնց համար ամեն բանից բարձր են հայ աշխատաւոր ժողովուրդի պատմական շահերն ու ձգտումները:

ԹՎ ԹՎ ԵՎ Յ ՈՒ ԹՎ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԵՄԱՆՆԵՐ ԹԻՒՐԵՆԱՅԻՑ

ԱՐԻՒՆԱՅԵՂ ԿՈՒԻ Շ. ԳԱՐԱՅԻՍԱՐԻ ՄԷՁ

Շ. Գարահիսար, 20 յունիս 1894.

Թուականէս 18 ամիս առաջ հայ կարաւան մը կողովակելու զրպարտիչ պատրուակով բանտարկուած էին չորս հայ երիտասարդներ եւ որոնց հետ երկու կտրիճ հայեր, Ա ս տ ու ա ծ ա տ ու ր 2 ու խ ա տ ա ր ե ա ն խարբերդիցի և Գ է ո Ր Զ է վ Ր ու զ ե ա ն, ռոտուստոցի որոնք տեղս եկած ու խանութ բացած էին, սակայն այն չորս անձինք ձերբակալուած ժամանակ՝ վատ զըրպարտութեամբ մը յիշեալ կտրիճներն ալ կասկածելի ցոյց տրուած ըլլալով՝ անոնք ալ բանտարկուեցան: Ղրանին ու խանութին խողարկուելու ատեն իրենց Հնչակեան վկայագրերը գտնուեցան, որով յայտնի

եղաւ թէ ասոնք առանձին պաշտօնով Հայաստան երթալու համար եկած էին: Կառավարութեան փնտռած ու չը գտածն էր, ուստի բանտարկեց զանոնք սաստիկ ճնշման տակ ու շղթայակապ: Երկար հարցաքննութիւններէ յետոյ, բողոքովին ապօրինի կերպով, թուրք դատարանը մահուան դատապարտեց յոյս երկուքը, Սեբաստիոյ նահանգական ատեանն ալ հաստատեց այդ դատաւճիռը, բայց իրենք Պօլսոյ վճռաբեկ ատեանին դիմելով բողոքեցին այս անիրաւ վճռոյն դէմ, եւ վերջերս ալ լսելով թէ այդ արիւնածարաւ ատեանն ալ պիտի հաստատէ նոյն վճիռը, միւս կողմանէ բանտի իւրստութիւններէն հոգինին բերաննին եկած՝ կորոշեն յուսահատական միջոցներու դիմել, եւ իրենց ծարած 40-50 ոսկին կաշառք տալով ոստիկանապետ Սէյի տ միւլաւազըմին (որուն քով պահուած էր նաեւ իրենց բռնուած ատեն ունեցած 22 հատ ֆրանսական ոսկին), անոր միջոցաւ կըստանան երեք լէվօլէր եւ երեք դաշոյն, եւ ասոնցմով զինուած յունիս 15-ի երեկոյն ժամը 11 ու կէսին ատեններ պատճառով մը դուրս մնացող իրենց ընկերը ներս բերուելու պահուն՝ պատահութիւն գտնելով՝ դուրս կը խուժեն չորս հայ եւ երկու տաճիկ բանտարկեալներ, իսկ ուրիշ երկու հայ երիտասարդներ կը մնան ներսը, վասն զի մօտ ժամանակէն պիտի արձակուէին: Բանտապահն ու ոստիկաններէն մին, որոնք սրգելք ըլլալ կողմէն, գնդակահար կիլնան, բայց հազիւ տասը վայրկեան տեղ կը հեռանան, ահա հեծեալ եւ հետեւակ ոստիկաններ, 40-ի չափ զօրք ու թուրք խուժանը կը պաշարեն զանոնք ձորի մը մէջ: Երկուստեք կրակներ կըլլան, թուրքերէն չորս հոգի եւս կը վիրաւորուին, որոնցմէ այժմ երկուսը մեռան: Պաշարեալք դիւցաղնաբար կը պաշտպանեն ինքզինքնին եւ իրենց գնդակներ սպառելէ վերջ միայն անձնատուր կըլլան. նոյն իսկ տաճիկներ կը պատմեն թէ անոնցմէ մին, տակառագործ Գասպարը, թէեւ վիրաւոր, չուզեր սակայն յայնձնել ձեռքը գտնուած վեցհարուածեանը, այնպէս որ թեւն ու ձեռքերը գաշոյնով կտրտելէ յետոյ միայն կրնան առնել զայն: Անձնատուութենէ վերջ կըսկսի այն սոսկալի եղերներգութիւնը, որ խիստ աղեկաուր է. ոստիկաններ, զինուորներ սուրով ու սուրինքով, թուրք խուժանը քարով ու բիրով, ոմանք ալ մանգաղով կսկսին անխնայ հարուածել այլ եւս անգէն ու անպաշտպան մնացած թշուառները, եւ այս ամենը կը գործուին բարբարոս Միւթէսարըֆի արեւալ վիճակի մէջ սուած գազանական հրամաններու շնորհիւ: Ի վերջոյ, անոնք տակաւին չի մեռած, ընդ քարշ կը բերին կառավարութեան դուռը: Միւթէսարըֆը կը հարցնէ թէ ո՞վ սուաւ ձեզ այդ ղէնքերը, անոնք նուաղեալ ձայնով կը պատասխանեն յՍէյի տ միւլաւազըմին: Ասոր վրայ սաստիկ կատղելով նա կը հրամայէ իսկոյն փութացնել անոնց մահը, վեց մեթր. բարձրութենէ մը կառավարութեան առջեւի հրապարակը նետել տալով զանոնք: Սակայն այսչափով չի բաւականանար այս կատաղի գայլը եւ ներսը մնացած երկու երիտասարդներն ալ վեր հանել կը տայ հարցաքննութեան համար, եւ երբ ասոնք ալ կը պատասխանեն թէ Սէյի տ միւլաւազըմին միջոցաւ ստացուած են ղէնքերը, զանոնք եւս նոյն դժոխքմբեր տանջանքին կը մատնէ: Բանտարկեալներէն կամ դուրսը գտնուողներէն բազմաթիւ անձինք, թէ հայ թէ թուրք, անոնց աղիողորմ ձայները լսելով սաստիկ կը

յուզուին, սակայն իրենց մեծերու տուած հրամաններով գազանացած ոստիկաններու սիրտը չի շարժիր եւ անոնց մարմինն ամբողջովին կը ծածկեն սուրի եւ սուրինի բազմաթիւ վերքերով եւ զանոնք մէյմէկ արիւնշաղախ կոյտ կը դարձնեն: Սէյի տ միւլաւազըմին իր անձին ապահովութեան համար իրաւունք ունէր այսպիսի խժգժգութեամբ անոնց կեանքը վերցնելու, սակայն միւթէսարըֆը ինչ պատճառ ունէր անոր շահուն ծառայելու եւ անոր գործիք ըլլալու, այս կէտը պարզուած չէ գեռ եւ շատ զարմանալի կը թուի. մի գուցէ նախապատրաստեալ դաւաճանութիւն եղած ըլլայ այս, ուր ո՞ր եւ է իւրըրտում չի կայ՝ հետեւաբար իրենց համար ալ փառաց ասպարէզ ու կաշառքի միջոցներ կը պակսին:

Հետեւեալ օրը, յունիս 15-ին բազմաթիւ անձինք սրտաբեկ ու ատելութեան բոցով լի դիմեցին գերեզմանատուն, ուր փոխադրուած էին վեց հատ սպանելոց արիւնշաղախ դիակները, նէ վրոլ զեան Գէորք 2 ու խատարեան Աստուածատուր, տակառագործ Գասպար (Արմտանցի), Գըրքեւեւեւեւ Սեդրա կ, Փամպուկ ճեան, Համբարձում, 2 ախըռեան Արամ, այս վերջինք Գարաձում, 2 ախըռեան Արամ, այս վերջինք Գարահիսարցի: Թողովուրդը տեսնելով դիակները, յուզուած բացաւ անոնց մարմինը (կառավարութիւնը արգիլած էր անոնց մօտենալը, եւ լուացումն ու դիպատումն իսկ կառավարութեան խցիկներէն միայն մէջ կատարել տալով մի առ մի ձամբած էր) եւ տեսնելով անոնց դէմքի ու մարմնոյ վրայի սոսկալի վերքերը՝ պահանջեց որ քննութիւն մը բացուի, ուստի սպանեալներէն ոմանց ազգականք, քահանայք եւ մի քանի այլ անձինք դիմեցին տեղոյս պատր. փոխանորդ Խորէն վարդապետին՝ որ վաւարար քաշուած Այնաճեան Զարութիւն աղայի տունը՝ անտարբերութեամբ կը լսէր ամեն անցուդարձ, կը խնդրէր որ Գոյ ու Բժշկական քննութիւն մը կատարել տալով տեղեկագիր մը առնէ. այլ նա խստութեամբ պաւտանի էին այդ տեսակ մահուան մը. այս պատասխաւնին վրայ կը յուզուի ժողովուրդը, կը պահանջէ որ անթաղ մնան դիակները: Կառավարութիւնը լսելով՝ զինեալ ոստիկաններ ու փոխ կը դրկէ հոն՝ որոնք գալով կը պաշարեն գերեզմանատան դռները, եւ դուրս ելողին ու ներս մտնողին վրայ խուղարկելով կը պահանջեն որ բողոքները հրապարակ քան. յայտնի է թէ ինչ ըսել կուզէին, ուստի ոչ ոք կը համարձակի իւր բողոքը բարձրաձայն յայտնել, հետեւաբար կը հրամայէ փոխար որ թաղուին ննջեցեալները եւ այնչափ կաճապարեն որ քահանայից արարողութիւնն իսկ չեն թողուր լմնցնելու եւ իրենք բռնելով դիակները փոսը կը լնցնեն եւ կօգնեն փոսապնդներուն հողը վրայ տալու համար: Այսպէս թաղուեցան բռնութեան այն թշուառ զոհերը, այլ ամեն հայու սիրտ արիւնշաղից կը բողոքէ եւ պիտի բողոքէ յաւիտեան այս աստիճան անագորոյն խժգժգութեան մը դէմ, որ կը գործէ կառավարութիւն մը հրապարակի մէջ, լոյս աշխարհի մէջ:

Այժմ այդ վեց անձինք անհետանալէ եւ այդ գաղտնիքի խոստովանութիւնն ալ իրենց հետ գերեզման տանելէ վերջ՝ կառավարութիւնը սկսած է բազմաթիւ ձերբակալութիւններ ընել առանց ո՞ր եւ է ապացոյցի, եւ ձերբակալեալ անձանց հետ կը վարուի այնպիսի խստութեամբ մը որ կարծես իրապէս յանցաւոր եղած ըլլա-

յին: Անոնց համար գնացած անկողին ու կերակուր ետ դարձուցին, ըսելով թե «անոնք ալ անթի պիտի ստակեցնեն» ու ամբողջ երկու օր անթի ծարաւ պահեցին, օրը մի քանի անգամ ալ ծեծեցին, որպէսզի չը գիտցածնին խոստովանին կամ պատասխանատու հայ մը ցոյց տան: Երկու օր վերջ, թէպէտ եւ կերակուր տանելու թոյլատուութիւն եղաւ, բայց անթի ոստիկանաց կը յայնձնուէի, վասնզի ուղղակի յարաբերութիւն ունենալը բոլորովին արգիւեալ է եւ չը գիտենք թէ կերակուրներն իրենց տեղը կը հասնին կամ ինչ բանակութեամբ կը տրուին: Ուրիշ յանցանքի համար կանխաւ բանտարկեալ երեք հայեր այնքան ծեծեցին եւ տակաւին կը ծեծեն ամեն օր, որ անոնց կեանքն ալ վտանգի մէջ է, եւ արդէն մէկը հիւանդացած է եւ միւսին ալ Մ ա զ մ ա ն ե ա ն Գ ա ս պ ա ռ ի ն ք թէն ու բերնէն սոստիկ տրուին կը հոսի. այս վերջինն ալ այն աղէտալի գիշերուան մէջ պիտի խողովակէին, եթէ բանտակից թուրք մը անոնց ձեռքէն աղատած չըլլար: Տեսնենք դեռ ինչեր պիտի գործեն իրենց քաղաքական բարբարոսութեան հետքը կորսնցնելու համար: Գեռ մինչեւ այսօր սոստիկ գանակոթեամբ կը տանջեն այն հայ բանտարկեալները, որոնք տարբեր խնդիրներով ուրիշ խուցերու մէջ փակուած են, պատճառելով թէ իրենք ալ գիտեն կամ օգնած են անոնց փախստեանը, մինչդեռ երկու թուրք փախստականներու ետեւէն երեք օր վերջը միայն ոստիկաններ զրկեցին, որպէսզի փախելու եւ լաւ մը պատու պարուելու ընդարձակ միջոցներ տան անոնց: Կրտսի թէ Սեբաստիոյ կուսակալը եւ Էրզրոնի կեանի զօրաց հրամանատարն այստեղ պիտի գան քննութեան համար, այսինքն անիրաւութեան երկու զօրաւոր պաշտպաններ ալ պիտի աւելնան, վասնզի բնաւ յուսալի չէ որ թուրք ատեանէ մը ճշմարտութիւն եւ արդարութիւն դուրս գայ: Ժողովուրդը բողբաբով մը խորէն վարդապետին դիմեց որ ազգայնոց իրաւունքին պաշտպան կենայ, թէիւնկէց ալ բան մը չենք սպասեր, բայց գոնէ օրինական սահմանի մէջ մեր պարտականութիւնը կատարած եղանք, որպէսզի մեղադրելի չըլլանք ապագային մէջ:

ԲԱԳԱՐԱՏ

Ամասիա, 17 մայիս 1894.

Կերկայ թղթակցութեամբս կուգամ յայտնել մեր անձուկ վիճակը, որ երթալով աւելի կը ծանրանայ եւ զգալի կը դառնայ: Ապրիլ 29-ին առաւօտուն կանուխ տաճկերէն լեզուով ու գրութեամբ յայտարարութիւններ երեւան եկան: Առաւօտութիւնը, ըսել կուզենք Պէքիոյ փաշան, բոլորովին շուարած ու զայրացած ինչ ընելը չէր գիտեր. թէեւ մինչեւ ցարգ այդ մասին ձեռքադրութիւններ տեղի չունեցան, սակայն կը լսենք որ պատուաւոր թիւրքերէն հարցումներ կընէ, թէ այս դերը կատարողներ իսլամ ժողովուրդներն են: Կս հարցուցի, կըսէ նա, իմ հաւատարիմ գիշերապահներուս, թէ որոնք տեսաք եւ որոնք էին այս յայտարարութիւններու ցրուիչները. պատասխանեցին թէ՛ մենք երբեք չենք կրօնաւոր կեանքներու վրայ զրպարտութիւններ ընել, որովհետեւ անոնք ժամը 12-էն վերջ հաւերու պէս իրենց բոյնը կը մտնեն, ոչ որ կը տեսնուի անոնցմէ, մինչդեռ իսլամներ առանց լապտերի մինչեւ առաւօտ կը պտտին: Այս պատասխանին վրայ նա այժմ գաղտնի կերպով կը նեղէ թիւրք հարուստ դասակարգը: Այդ յայտարարու-

թեան իմաստը, որչափ որ կարողացանք ստուգել, հետեւեալն է: Անոր մէջ ծանուցուած է Պէքիոյ փաշայի ասկէ 15-16 տարի առաջ գոյութիւն ունեցող հուշակաւոր աւագակաթմաքի մը պիտը լինելը. նա այդ ժամանակ այնքան համարձակութիւն է ունեցեր, որ մինչեւ անգամ քաղաքին մէջ աճուրդի ելած ձիու մը քալելը իբր թէ փորձելու համար, թամբին վրայ ցատկեր եւ մտրակելով անյայտացեր է. առհասարակ բոլոր թիւրք գիւղացիները կը խօսին անոր էշերու եւ ձիերու գողութեան մասին: Այժմ այդ աւագակաթմաքի իրեն օգնական եւ խորհրդակից ունի Ս ա ռ ա Ֆ Ա պ տ ու լ լ ա հ անուն անձը. սա այնպիսի մէկ անհատ է որ իր պապն անծանօթ է եւ հօրը խանձարուն ալ մզկիթի դռնէն գրտնուած է: Ապտուլահը իր 17-18 տարեկան հասակին մէջ հայրը սպաննած լինելով բանտարկուեցաւ. իր գեղեցկութեամբ նշանաւոր, բանտին մէջ իր պրական պատիւը զոհ տալով պաշտօնեաներու ստորաբարձ կրքերին յաջողեցաւ կըրօնի գումար մը ձեռք անցունել եւ հինգ տարիէն վերջ ազատ արձակուեցաւ. իր բանտի մէջ անպատիւ կերպով շահած դրամագլխին վրայ աւելացնելով մեծ հարստութիւն՝ նա այսօր դարձած է ամենապատուաւոր մարդ եւ միւթեւարդի ալ խորհրդակից: Իսկ Կ ը Ռ Վ ը Ռ Ա լ ի ըսուած անձը Պէքիոյ փաշային երկրորդ խորհրդակիցն է, անցագիրներու պաշտօնեայ լինելով, երբ հայեր, մանաւանդ մաւաճառներ անցագիր կուզեն գիւղերը երթալ ոչխարներ բերելու համար, անմիջապէս բանտարկել կը տայ, պատճառակելով թէ դուք ասպատակներու խօսք տանող բերողներ էք: Իսկ ձեր երկար ժամանակ բանտ մնալէն յետոյ հազիւ կրնան անպարտ արձակուիլ, այն ալ արդար դրամի գորութեամբ: Կըռ-Կըռ Ալի, որ յատուկ մաւաճառի խանութ ունի, աչքի առջեւ ունենալով իր անձնական շահը, չը թողուր որ հայերը գիւղերը երթան, ինքը իր մարդիկները կուղարկէ հարկահան ոստիկաններու հետ, որոնք կառավարական ոյժով զօրացած՝ կը վսիցնեն խեղճ գիւղացիները եւ յիսուն դահեկան արժող ոչխարները կը գնեն քսան դահեկանի: Տուրքերը հաւաքելու ժամանակ տեղի ունեցած զեղծումները եւ ժողովրդին քաշած տառապանքը անհնար է նկատագրել:

Համաճարակ ախտն առիթ բռնելով՝ բոլոր յարաբերութիւններ բացէ ի բաց խզուած են, ոչ որ կարող է իր քաղաքէն կամ գիւղէն դուրս ելնել, մինչդեռ այդ հիւանդութեան նշանն անգամ չէ տեսնուած տեղս, միեւնոյն ատեն եթէ այդ տեսակ ախտ մը երեւան գայ՝ քննելու կարող բժիշկ մը անգամ չը գտնուի բաղաքիս մէջ: 20 օրէ ի վեր թղթատարութիւնն եւս դադարած է:

Այժմ քաղաքիս մէջ հայ բանտարկեալներու թիւը 200 է, եւ 60 ի մօտ ալ այլ եւ այլ պանդոկներու մէջ կը գտնուին. ասոնք մեծ մասամբ Մարզուանցի եւ Հաճի-Գիւղացի են, որոնք քաղաքիս մէջ կը շրջին իրբեւ բերդարգեալներ եւ օրէ օր ասոնց թիւը բազմանալու վրայ է:

Մէկ երկու շաբաթ առաջ 10-15 երիտասարդներ բանտարկեցին, ասոնց գլխու մազերուն դէպի երեսն ի վար երկնցած ըլլալուն պատճառով. իբր թէ այդ բան յեղափոխական անդամներու նշան ըլլայ. ասոնք 10 օր բանտը մնալէն վերջ արձակուեցան: Մ ա լ ե ա ն Ա ս տ ու ա ծ ա տ ու ը ը Լ ի իր որդին բանտարկեցին. ասոր

*) Տե՛ս նախորդ Թղթակցութիւն յՀնչակ^ւ № 3

ամենամեծ նեղութիւն կուտան. մի քանի շաբաթ սոյն բանախ մէջ պահելէ վերջ կրկին նոյնօրինակ նեղութեամբ կը փոխադրեն Բ ա ղ ի շ յ ի բանախ. ցարդ կը մնայ նոյն բանախ մէջ: Քաջ գիտեմք որ իւր ծերութեան պատճառով չը տոկալով բանախ նեղութեանց, զոչ պիտի երթայ տաճիկ կառավարութեան անյադ. կրից, կ'արօտ մնալով փախստական զաւակաց տեսութեան եւ աւերակ դարձած տան: Նոյնպէս կառավարութիւնը Ղըզըւ-Աղաճ գիւղէն յեղափոխական անուամբ փախստական եղող Ա ս ա տ ու լ ր Յ ո վ Տ ա ն ն է ս ե ա ն ի, Ա Ր թ ի ն Վ ա-ր ա պ ե տ ե ա ն ի, Մ կ ը տ ի չ Ս ո ղ ո մ ո ն ե ա ն ի, Մ օ-ս ի կ Թ ու մ ա յ ե ա ն ի, Յ ո վ Տ ա ն է ս Տ Պ օ ղ ո ս-ե ա ն ի եղբայրներն ուղեց ձեռք ձգել. այժմ նոքա աստ անդ թափառելով սոցա ընտանիք եւ իրենց զաւակունք նօթի ու ծարաւ կը մեռնին այսպէս. տաճիկ կառավարութեան սովորութիւն դարձած է հայ տներն աւերակ դարձնել. . . . Նոյնպէս նոյն Ահաբօնք գիւղէն ձերբակալուած են ըէյս Բ չ օ անուն հայն եւ Պ ա Ր խ է-ե ա ն Մ ա Ր տ ի կ անուն 15 ամեայ պատանին. վերջինիս բով գտնուած է դպրոցական տետր մը, որոյ մէջ մի քանի ազգային երգեր եղած են. երբ պատանւոյն մեծ ըս-պառնալիք կը կարդան եւ ոստիկանք կրկին մտրակով կապուեցան մարմինը՝ պատանին քրդերէն լեզուաւ կը թարգմանէ երգերու պարունակութիւնը: Այս առթիւ կառավարութիւնը կատարի զայլի պէս կրկին ամեն տեղ վազել եւ լոկ գրել կարգալ գիտցողներու տունները խուզարկել. իրենց այսպիսի վայրենի խուզարկութեամբ հայ հասարակութեան վրայ մեծ սարսափ ազդած են. այժմ թէ վերջիչեայ ըէյսը եւ թէ պատանին կը հիծեն բան-սին մէջ նօթի ու ծարաւ: Կառավարութիւնն իւր հաւաքածսները կը բազմապատկէ խուլը գաւառակի մէջ ի-րեն օժանդակ ունենալով քուրդ աշիրէթները, խուլեցաւ որ յիշեալ ըէյս Բ չ օ ն Բ ա ղ է շ ի բանախ մէջ խեղճ ու նօթի թողնելէն մեռած է, եւ մեռեալ դիակի վրայ եւս, անյուր չարչարանքներ տուած են, զարնելով, նշարելով, վերջապէս եթէ կայ դժոխք մը տաճիկական բանտին են: Յանցանք է Տաճիկահայաստանի մէջ հայու մը մարդկութեան նշոյլներ ունենալը, եթէ գտնուի այդպիսի մը նորա բաժինը բանտ, մահ եւ կախաղան է. . . . Այսօր ժողովուրդը վերջին աստիճան չքաւորութեան մատնուած, չը գիտէ արդեօք իւր ընտանեաց օրապահիկն հայթայթէ, թէ բանտարկեալները պահէ. թող հաւատան ընթեր-ցողք՝ որ շատ մը բանտարկեալք բանախ մէջ այլ եւս չը կարենալով անօթութեան դիմանալ փախադ կը յայտ-նեն կրօնափոխ լինելու: Օրինակ, Մշոյ մէջ բանտարկեալ Գոմեր գիւղացի Ա Ր թ ի ն անուն երիտասարդն՝ որ քա-նիցս անօթութենէ նուաղած էր, բանախ առջեւէն անցնող ծանօթներուն կը պողայ դաժմ իւր մեղքը կը համարիմ մատնութիւն ընելը բայց ճարահատ եւ յուսահատ կը դի-մեմ կրօնափոխութեան, գէթ կեանքս ազատելու. . . .

Այսպէս է Տարօնոյ հայ հասարակութեան եւ բանտարկելոց ընդհանուր վիճակն. թող այս գլխաւոր պարագայի վրայ շփոքն ընդհանուր վիճակը:

Գ.Ա.Զ.ՊԻՆ.

Խնուս, 1 դեկտ. 1893.

Անցեալ իմ թղթակցութեամբ վեր ի վերոյ նշա-նակած էի Խնուսի եւ շրջակայքի (Մշոյ, Պոլանդա, Նարդովայ) գաւառակներու գաղթականութեանց մասին

մի քանի տեղեկութիւններ: Այն ընտանիքները, որոնք բնաւ ապրուստ չունէին աշխատելու մէջ գաղթեցին դէպի Կովկաս եւ այլուր. նաեւ կը գտնուին ընտանիքներ, որոնք մինչեւ գարնան սկիզբը հազիւ հազ ու աւելի ու-նին եւ որոնք բաւական մեծ թիւ մը կը կազմեն, ան-կասկած պիտի գաղթեն գարնան, որ առեւ, ինչպէս կե-րեւի, ցորենի սօմարը անմերձեանալի գնով պիտի ծախ-ուի: Այժմ ցորենի սօմարը վեցէն վեցուկէս օսմ. ոսկի է եւ այն ալ համարեա թէ պակաս է: Ուրիշ տարիներու պէս ամբարուած ցորեն չկայ. կորեկի սօմարը չորս-ուկէս օսմ. ոսկի է, մինչդեռ ուրիշ տարիներ կորեկի կոտը 40 50 փարայ էր, այսինքն՝ սօմարը 35-40 ղըշ էր. հերու, որ սղութիւն էր, կորեկի կոտը 3 4 ղըշ էր. իսկ այժմ նոյն կոտը 13-15 ղըշ է:

Որքան կը յիշեմ անցեալ նամակիս մէջ գաղթա-կանութեանց գլխաւոր պատճառը, այս տարուայ երաշ-տութիւնը կամ հացի պակասութիւնը ցոյց տուի. եւ ա-կայն եթէ բուն պատճառն որոնենք դուրս կուգայ մէկ ուրիշ եւ ամենագլխաւոր պատճառ, որ վաղուց ի վեր գոյութիւն ունի, եւ հետզհետէ կը քայքայէ հայաս-տանցիներուն տնտեսական վիճակը. այդ է՝ թէ թուրք կառավարութեան եւ թէ քիւրդ տարրի հարստահարու-թիւնները, որոնց հետզհետէ թողուցած անբուժելի հետ-քերն, այսպիսի սուղ տարիներու մէջ աւելի զգալի կը լինեն եւ կստիպեն խելճ գիւղացիները գաղթել: Ինչ-պէս հարկւրին 60 տոկոսով փող առնէ եւ հաց գնէ:

Այս գարնան մէջ պատահած երաշտութիւնն ու դէպ-քերն ուրիշ ժամանակներ եւս տեղի ունեցած են: Սա-կայն այն ժամանակները ժողովուրդը տակաւին այսքան ընկճուած չը լինելով՝ կերպով մը առանց տեղէն շար-ժեւում, գաղթելու իր ունեցածը կը ծախէր ու կապրէր, իսկ այս տարի եթէ չը կրնար դիմանալ, բուն պատ-ճառն այն է, որ երկար տարիներէ ի վեր թալանուելով, հարստահարուելով այլ եւս արժեքաւոր ոչինչ չէ մնա-ցած, որպէս զի ծախէ եւ ուտէ: Ամենամեծ կարգին հո-ղերն անդամ արժէք չունին. կով մը երեք մէծիտիէյի, ոչխար մը մէկ մէծիտիէյի կը ծախուի: Շատ գիւղացի-ներ ոչ միայն երկրորդական պէտքերն՝ այլ եւ բնա-կան պէտքերն անդամ լրացնելու ոչինչ չունեն: Ցորեկ-ուան հագուստի տեղ գործածուած ցնցոտիները գիշե-րը վերմակի տեղ կը ծառայեն, իսկ տակը խոտ է ա է օ-չ է կ ի տեղ: Միջին դասակարգին պատկանող գիւղա-ցիի մը տան շաբաթական գոյքերը եթէ հաւաքես եւ ծախես (հողագործական գործիքներով միասին) բոլորը հազիւ 2-300 ղըշ արժէ, բացի ոչխարներն ու տաւար-ները, որոնց սեփականութեան վրայ այնքան վստահ է, որովհետեւ կեանքի, պատուի եւ ընչից ապահովութիւն չը կայ: Սա չափազանցութիւն չէ, այլ ճշմարտութիւն, ինչպէս ակնյայտի կերեւի ոչ միայն անցեալ նամակէս, այլ եւ հետեւեալ դէպքերէն:

— Հոկտ. 28-ին Ղարաբէօփիւիցի Հ ի Ր ա պ ի եղ-բօր տղան երկու եղները գիշերով կը տանին:

— Հոկտ. 30-ին Պ ու լ ը ն ա պ ա յ 150 ոչխար կը տանին օր ցորեկով Գ է օ շ չ քրդաբնակ գիւղի քրդերը:

— Սեպտ. 28-ին Փ ա յ ի կ (քրդաբնակ) գիւղի գլխա-ւորներէն Ա Ր ի Փ ա ղ ա ն, Ե ու լ ս ու Փ ա ղ ա ն եւ Ղ ա-ս ը մ հեծեալ եւ հետեւին 15 ծառաներ առած 2 է-վիրմէ գիւղին վրայ կը յարձակին, բայց գիւղացիք կը դիմադրեն եւ մի քանին վերաւորելով ետ կը փախցու-

նեն առանց բան մը տալու:

— Հոկտ.ին մէջ Արօս գիւղէն 10 կով եւ եղ կը տանին (1 կով կոբէեան Մարտէին, 1 արջու. քէօշէեան Մարգարին, 1 եղ Հարամիկի Սարգսին, 1 կով Մօսօին, 3 եղ Պտէեան Խաչօին, 1 եղ Հաղօյի տղային, 2 եղ Էնկէեան Սարգսին. վերջինիս սրտի վրայ այնքան կը ծեծեն որ շնչասպառ տուն կը բերեն):

Սոյն գիւղացի ուստայ Մարտօն եւ իր եղբորորդին, որք զէնք ունենալու ամբաստանութեամբ ձերբակալուած ու կարին տարուած էին. աս անգամին կարնոյ բանտին մէջ տրուած չարչարանքին չը դիմանալով եղբորորդին կը մեռնի. իսկ առաջինը ուստայ Մարտօն, այս ծերունին բերդ փոխադրուելով ցարդ բանտը կը մնայ:

— Հոկտ. ամսոյ մէջ սոյն Արօս գիւղի քիւրդ Տովիւլը գիւղացւոց լաւ ոչխարներէն 50 հատ զատելէն եւ իր հայրենակից Մովսիսուլաճցիներուն յանձնելէն եւ տարուած ոչխարները արդէն սարը անցնելէն վերջ, հաւար կը կանչէ: Գիւղացիները, թէեւ իրողութիւնը կը հասկնան, բայց չեն համարձակիր տրանջալու, քանի որ Տովիւլը մի քանիներու պաշտպանեալն է:

Յաւալի է ըսել որ մեծաւ մասամբ հայ գիւղացւոց մէջ ախտ դարձած է հովիւները, տեղերու ու գիւղերու պահապանները քիւրդ կ'որդեւ սա սխալ կարծիքով թէ քիւրդը՝ բրդուն խաթը համարելով՝ իրենց չի վնասեր, բայց իրականութիւնը սա է որ քրդերն իրենց պաշտօնավարութեան միջոցին ամեն ծակն ու ծուկը լաւ ուսումնասիրելով՝ յարմար ժամանակին առիթը չեն փախցուներ ուզածնուն պէս մտնելու եւ գողնալու: Քրդերն առհասարակ իրենց ծանօթ հայերէն կը գողնան. քան թէ անծանօթներէն. ծանօթներու տուն գողութեան գնացած ժամանակին այնպիսի համարձակութեամբ կը մտնեն, որ եթէ տեսնուին բարեկամ ծանօթ են, իսկ եթէ չը տեսնուին արդէն գող են: «տին աղբ, նա տին տրղբ» յայտնեն «տեսան՝ ես եմ, չը տեսան՝ գող եմ»:

(կը շարունակվէ)

ԱՆԼ

ԳԻՊՔԵՐԸ ԵՕԶՂԱՏՈՒՄ

Անցեալ դեկտեմբերին եւ ներկայ յունվարին Խօզղատում տեղի ունեցած յայտնի արիւնայեղ դէպքերի առիթով Կ. Պօլսից այնտեղ ուղարկված յատուկ քննիչներին տված լահիէի (տեղեկագիր) եւ Անգլիական դեսպանին ուղարկած ընդարձակ տեղեկագրի օրինակները խմբագրութեանս զերկված լինելով, մենք յ'Հնչակի' ներկայ համարից սկսած թարգմանօրէն հրատարակում ենք: Այդ պատճառով վկայագրերի կարեւորութիւնն ու նշանակութիւնը մեծ է ինքն ըստ ինքեանեւ կարօտ զէն առանձին լուսարանութեան մեր կողմից:

Վսեմաշուք փաշա, մեծ. աղաներ եւ էֆէնտիներ:

1893 յունվարի 30 -ին երեքշաբթի օրը պատահած յայտնի յայտարարութիւններին ծնունդ տվող պատճառների մասին պէտք եղած բացատրութիւններն ու ծանօթութիւնները ի սէր հայրենեաց եւ ի սէր ազգութեան ըստ ներքոգրելոյն ձեռք բարձր ժողովոյն կը ներկայացնենք: Եւ նոյն ատեն ձեռք խղճերին դատաւոր պատմութիւն մը եւ ձեռք վճիռները ջնջող մէկ ընդհանուր քաղաքակրթութիւն մը գտնուին եւս ձեռք կը յիշեցնենք եւ հետեւաբար

այս ամենն ինկատի առնելով, անոր համեմատ ալ բուն եղբուրթիւնը հիմնապէս բնականիւր եւ այս անտանելի վիճակին ժամ առաջ դարձան մը տանելիիւր կը խնդրենք:

Ընտելեան մէջ արդիւնքը պատճառէն կ'սխալմն ունենալուն պէս, քաղաքական գործերի մէջ եւս դէպքերի պատճառները կան, նա մանաւանդ մեր այս յայտնի դէպքին տեղի տվող պատճառները կարելի եղածին չափ հասկնալու համար, նախ եւ առաջ անոնց մասին ընդարձակ եւ որոշ ծանօթութիւններ հարկաւոր են:

Այս պատճառներ երկու մասի կը բաժնվին: Առաջին մասը, հայրենիքի բուն կենսական ծուծը փոքնող ախտին եւ առաջնոց իվեր այդ ախտը փոխանակ դարմանելու ջանքն չարաչար տարածողներու մասին է: Իսկ երկրորդը՝ ժամանակէ մը ի վեր կառավարութեան եւ քաղաքիս մեծամեծների գրգռելովը թիւրք ժողովրդին դէպ ի հայերն ունեցած սաստիկ հակառակութեան մասին է:

Մեզ կորստեան անդունդի եզերքը տանող այդ հիւժախտի եւ երկրի անտանելի դրութեան վրայ մեր թիւրք դրացիներն եւս գաղտնապէս մեզ հետ մէկտեղ թէեւ կուլան, սակայն իրանց լուութենէն օգտվող մի քանի պաշտօնեաների եւ մեծամեծների յանդիմանութիւններէն եւ տված վախերէն վերջին ծայր սարսափելով անոնց ներկայութեան ի սթաղֆիւր ու լա հ (բաւ լիցի) կը կարգան: Թէ այդ ամօթապարտ բառը պիտի կրնան Ալլահի ներկայութեան եւս արտասանել՝ թէ ոչ, այդ մենք չենք գիտեր, միայն թէ մենք ինչ որ չենք կարող խօսիլ ապագայ պատմութեան՝ ձեռք ներկայութեան եւս չը խօսենք յայտարարելով՝ գոնէ մեզ հայրենիքէն դուրս հանելու միջոցներուն վրայ խորհող իսլամ հայրենակիցներէնս առաջ տառապող ընդհանուր ժողովրդի պահանջին համեմատ կը շարժինք եւ հայրենիքի ազատութեան մասին խորհելու պարծանքը կը վայլենք:

Կառավարութիւնը ժողովրդով եւ ժողովուրդն ալ կառավարութեամբ, միայն կրնայ իր գոյութիւնը պահպանել: Ժողովրդի բարեկեցութիւնը կառավարութեան բարեկեցութիւնը կը նշանակէ, կառավարութեան բարւոք մատակարարութիւնը ժողովրդի երջանիկ վիճակով միայն կրնայ լրացվիլ: Այս բնական սկզբունքի գործադրութիւնը մեր տեղային կառավարութիւնը կազմող պաշտօնատեղերու ամենէն առաջ քաղաքական պաշտօնատեղին աչքէ անցնենք:

Տուրքերը զրկած ժամանակ չափազանց կերպով կը գրվին եւ հայրենիքի իւրաքանչիւր զաւակի վրայ անտանելի կերպով բեռնաւորվելով վերջին ծայր կը ձնչնն: Օրէնքի տրամադրութիւնն այդ սահմանաւորված տուրքը, որ ժողովուրդը պիտի վճարէ, թէպէտեւ թեթեւեղ կը հրամայէ, բայց այդ կէտը երբէք չի գործադրվի: Տուրքերը ըստ օրինի չափաւոր կերպով բաժնելու համար՝ գիւղերը ուղարկված պաշտօնեաներ, փոխանակ ժողովրդի տնտեսական վիճակին համեմատ տուրքերը սահմանելու օրէնքով սահմանված տուրքն իսկ եղծելով՝ այն աստիճան կը չափազանցեն եւ ղեկումների համար այն աստիճան կաշտոք կընդունին, որ ժողովրդի թշուառութիւնը երթալով աւելի եւ աւելի դժալի կը դառնայ, եւ այդ բոլորովն անյարմար բաժանութիւնների երեսնէն ազբաններն անտանելի ճնշողութեան ենթարկված են: Եւ դարմանալին այն է որ իր թագաւորին միշտ կոյր հպատակութիւն ցոյց տվող այդ ժողովուրդը, օրէնքի տրամադրութեան այսպէս չը լինելն եւ իր վրայ բեռնված

տուրքերի չափազանցութիւնը զգալով միատեղ, դարձեալ համբերութեամբ դուրս խոնարհած է եւ միշտ վճարելու պատրաստակամութիւն ցոյց տված է: Քայքայից տուրքերը գանձելու համար գիւղերը գնացող եւ առհասարակ հաւաքիչ (թահսիլտար) անունով ծանօթ պաշտօնեաներ կառավարութեան տրվելիք տուրքին համեմատութեամբ եւ կամ աւելի տուրք մը եւս իբր ծառայութեան վարձք իրանց տալու կը բռնադատեն եւ այսպիսով արդէն թըշուուսպած ժողովուրդը բողբոջին կը թշուառացնեն: Ասլուսանների քննութեան պատրուակով կալուածների արժեքին չափ ծախս առնելով գոչան (կառավարութեան ստացագիր) տալ եւ ասոր նման հազար տեսակ նենդունքութիւններով եւ խարդախութիւններով ժողովուրդը կողոպտել սովորական բաներ են: Տասանորդ անունը կըրող եւ փոխարէնն աւելի բռնել տալով, այս տեսակ գործունէութեամբ իրենցմէ բարձրաստիճան պաշտօնեաների գովասանքին եւ վարձատրութեան արժանանալու համար ըրած ձեռնարկներուն մէջ նոյն իսկ տեղւոյ միւթէսարըֆ փաշան տասանորդները գրված ժամանակ, այսինքն աղբատ ժողովրդի ունեցածը յափշտակելու եւ աւարի տալու գործողութեան ժամանակ, անձամբ եւ պաշտօնապէս կապառալուներուն իր օգնութիւնը առաջարկած է, այնպէս որ այս վերջիններս քաջալերութիւն ըստացած՝ ողորմելի գիւղացիները կողոպտած և գիւղական ժողովուրդին վերաբերող տասանորդի տոմարների գումարները գաղտնապէս աւելցնելով, խաբէութեամբ կնքել տալու նենգաւորութեան իսկ համարձակած են: Աւագակութեան այս դրութիւնը երկրագործ, մշակ դասակարգը թըշուառութեան անդունդին մէջ գլորած է, այնպէս որ տասանորդի այդ անտանելի խնդրոյն հասուցած վնասներէն բողբոջին զարհուրած, շատ գիւղացիներ իրանց այգիներու որթատունկերը եւ պտղատու ծառերը իրանց արմատէն. քակելու տխուր հարկին մէջ գտնված են:

Երկրագործութեան գիւրութիւն ընծայվելու համար հաստատված երկրագործական դրամատան հարիւրին վեց տոկոսը պաշտօնեաների զանազան հնարքներով հարիւրին քսան եւ հինգն իսկ անցած է, և այսպէս երկրագործներու քարեկեցութեան մէկ աստիճան օգնելու համար հիմնված այդ բարեգործական հաստատութիւնը անոնց թշուառութեան աղբիւրներէն մին եղած է:

Ճանապարհներ շինելու նպատակով ժողովուրդէն առնված գումարին համար տպագրված գօջան եւ ըստացագիր չը գտնվելուն, հաւաքիչներու կողմէն կրկին եւ կրկին կառնվին, իսկ պայմանագրով լրանալուն վըճարելու անկարող գտնվողներէն 18 դահեկան առնելով տոմարին մէջ 12 դահեկան կարճանագրեն: Գիւղերի մէջ այս խնդրի նկատմամբ տեղի ունեցած կաշառակերութիւններ եւ զեղծումներ ձեռք կը թողնուին երեւակայել: Չնայ գիտելու թէ այս ամեն բաներու պատասխանատու եւ գլխաւոր ճանչցված միւթէսարըֆներ ինչ պատճառով գիտցածնին՝ չը գիտցած, տեսածնին՝ չը տեսած, լսածնին՝ չը լսած կը կեղծեն, եւ ի սկզբանէ անտի կառավարութիւնների իսկական շահերի աղբիւրներն եղող երկրագործութեան զարգացումը, վաճառականութեան առաջգիմութիւնը եւ հայրենիքի շինութեան նպաստող որ եւ է կարեւոր խնդիրներ մոռնալով՝ տեղային անտուկէն կենսաբանական գանձարանին հինգ տասը հազար դահեկան աւելի ուղարկելու նպատակով անօգնական գիւղացիների բնակարանները, վերջին կիմանը

եղող միակ կովը եւ տնային կահ կարասիները մոռնեալիկն (թէլլալ) տալով կը ծախեն եւ այս անգութ վարմունքով կը պարծենան: Հանգստաթօշակի արժանացող պաշտօնեաներն ու գրագիրները եւ պաշտօնի փոփոխութեամբ ուրիշ տեղեր երթալու ստիպվող անձերն իրանց իրաւունքն եղող ամսականին ձեռք բերելու համար շաւաթներով հաշուակալութեան գրասենեակի շուրջը կը թափառին: Այս տեսակ թշուառներու հացի ստակին աչք ունեցող եւ գրեթէ զայն կէս առ կէս կիսող անիրաւ պաշտօնեաներ այդ անարգ գործողութեան շնորհիւ այսօր մեծ հարստութեան տիրացած են:

Վաւառքային պաշտօնատան հայրենիքի մարմնոյն վերայ բացած այս վերքերը, արդարադատութեան պաշտօնատունը քաղցկեղի վերածելու կաշխատի: Ժամանակաւ այս քաղաքի դատաւորական ավժուին վրայ այն աստիճանի իմաստուն դատաւոր ենք ունեցել, որ երբ մի քանի իսլամներ ողորմելի մի փեթեպակ բռնելով մղկիթի գորգերի գողութեան անբաստանութեամբ անոր են ներկայացուցել, վճիռը միմիայն ասոնց վկայութեան վրայ չը հիմնելով, նաեւ փերեզակի վիճակը եւ զիրքը ուսումնասիրած եւ կատարեալ տեղեկութիւն ժողովելէ վերջ ամբաստանողներին բուն գողերը լինելին հաստատած եւ երեւան հանած է: Մինչդեռ այժմեայ դատաւորները առհասարակ իրանց վճիռները ոչ թէ արդարութեան գրքէն, այլ աճուրդի թղթերէն կառնուն եւ այդ աճուրդի թղթի արժեքը բարձրացնելու անկարող գտնվող բուն իրաւանց տէրեր իրանց դատը գալիք աշխարհին թողելու ստիպված են: Հարուն-էլ-բէշիտի ձիւթապտուղի դատը տեսնող այն փոքրիկ մանուկին չափ անգամ իրանց դատարանին յանձնված դատերուն կարեւորութիւն, չը տալիկ մէկդի թողնուին, առողջ դատողութեամբ այդ կարգի խնդիրներ զանազանող դատաւորներ շատ հազուադիւրս են: Հիմա երկու վկաներ անկարող են մէկ անձի ուրացութիւնը հաստատել այդպիսով տուներ կործանվելու վրայ են:

Վնեցեք դատարանի վերաբերեալ թղթերը. այնտեղ պիտի գտնէք ոճրագործի վճիռ ստացող պարզ յանցաւորներ, պարզ յանցանքով ծածկված եղեռնագործութիւններ. ոճրագործութեամբ դատապարտված անմեղներ, դատարանի սրահները, իրանց դատերուն գերին դարձած անձերի եւ բանտերի մութ խորշերը, իրանց դէմ գործված անիրաւութեամբ առանց հարցաքննութեան ամիսներէ ի վեր բանտարկված անմեղների և տարիներէ աստի իրանց բուն իրաւունքը չը կարողացող հաստատող անհաստների լաց ու կոծով կարճագանգեն դեռ:

(Կը շարունակվէ)

ԱՌՅՍՏԵՍԱՆ

ՀԵՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՕՐԳԱՆ

«ԳԵՂԵՓԵՐ»

ԵՌԵՄՅԵԱՅ ՀԵՆԴԵՍԻ № 1 (ՅՈՒՆԻՍ)

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետեւեալ հասցեով. —

Athènes. (Grèce). — M. Beniard. Poste restante.

Լթէնք. Հայկական ազատ տպարան.